



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017
ՄԱՅԻՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՍԵՐՉԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	3
1.2. Ջրահեռացման համակարգ	13
1.3. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	15
1.4. Էներգոհամակարգ	16
1.5. Մեքենա-մեխանիզմներ	21
2.ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24
2.1.Բաժանորդների տվյալներ	24
2.2.Հասույթ	24
2.3.Գանձում	26
2.4.Ջրաչափեր	27
2.5. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	27
3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ	28
3.1.Ջրամատակարարման շարունակականություն	28
3.2.Էլեկտրաէներգիայի կառավարում	28
3.3.Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	30
3.4.Ջրատար համակարգի կառավարում	31
4.ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	38
4.1.Համակարգչային ցանց	38
4.2.Ինտերակտիվ համակարգ	38
4.3.Բջջային օպերատորներ և Ինտերնետ	38
4.4.Լոկատոր և Scada համակարգեր	39
4.5.Նոր սարքավորումներ և ծրագրեր	40

1. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում

Հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների սպասարկման տարածքների մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական, ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ:

➤ Քաղաք Երևան

✓ «Կաթնաղբյուր-Երևան» D=900մմ թուջե ջրագծի վրա՝ Մայակովսկի գյուղի 8-րդ



փողոցի 43 հասցեի մոտ, առկա էր մեծ արտահոսքով ջրագծի վթար: Հողային աշխատանքների ժամանակ պարզվել է, որ կոռոզիայի է ենթարկվել D=50մմ միացումը: Քանի որ նշված ջրատարի ջրազրկումը գրեթե անհնար էր, տեղում որոշվել է կանխել վթարը՝

ջրի հոսքի տակ: Վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավվել են թվով 5 քաշող պոմպեր և հատուկ տեխնիկա: Ջրատարի վրա առկա անցքը խցափակվել է և տեղադրվել D=900մմ փակ գոտի միացում: Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է 4-5լ/վ ջրաքանակ:



✓ Նոր-Նորքի 1-ին զանգվածի Ֆ.Նանսենի փողոցում վթարաորոնողական աշխատանքների ընթացքում, D=250մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է վթար, որի արդյունքում տնտեսվել է 7լ/վ ջրաքանակ:



✓ «Կաթնաղբյուր V» ջրատարից դուրս եկող $D=400$ մմ ջրագծից սնվող Վարդաշեն թաղամասի և Մուշավան համայնքի ճնշումները կարգավորվում էին փականներով, և գիշերային ժամերին՝ նվազագույն ջրօգտագործման ժամանակ, ջրատարում առաջանում էին մինչև 3 մթն ավելցուկային ճնշումներ: Իրավիճակի կարգավորման նպատակով Նուբարաշենի խճուղու և Գ.Մահարու փողոցի խաչմերուկում՝ երկու ջրագծերի միացման կետում, տեղադրվել է $D=150$ մմ էլ.շարժաբերով փական, որը ժամը 24:00-ին բացվում է՝ ջուրը մղելով «Արին Բերդի» ՕԿՁ-ից $D=600$ մմ ջրագծով սնուցվող մի շարք տարածքներ (Գաջեգործների, Նոր Արեշի 7-50 փփ.) և առավոտյան ժամը 06:00 փակվում է՝ դրանով իսկ նվազեցնելով ավելցուկային ճնշումները և կանխելով ջրամատակարարման համակարգում վթարների առաջացման հավանականությունը:

Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է մոտ 7 լ/վ ջրաքանակ:



➤ Նոր Նորքի 3-րդ զանգվածի Բաղյան 26 հասցեի հարևանությամբ գտնվող թվով 4 բաժանորդներ նախկինում սնվում էին վթարային վիճակում գտնվող Տորք Անգեղի ձորով



անցնող $D=300$ մմ ջրատարից: Ջրատարի շահագործումը բավականին դժվար էր՝ ելնելով տարածքի ռելիեֆի առանձնահատկություններից :

Նշված 4 բաժանորդներին ջրով ապահովելու նպատակով Բաղյան փողոցի գործող $D=250$ մմ թուջե ջրագծից գոտի միացումով կատարվել է $D=63$ մմ $L=20$ մ պոլիէթիլենային ջրագծի միացում՝ հաստելով

Բաղյան փողոցը, իսկ շին. կազմակերպության կողմից կառուցվել է D=1500մմ դիտահոր:


Արդյունքում շահագործումից հանվել է D=300մմ L=1200մ քայքայված պողպատե ջրագիծը:



➤ **Քաղաք Գյումրի**

➤ Քաղաքի օդանավակայանը և դրա հարակից թաղամասերը սնող ջրագծի վրա հայտնաբերվել է թվով 2 վթար՝ $Q=5\text{լ/վ}$ ընդհանուր ջրաքանակով: Վթարները վերացնելու, ինչպես նաև մատակարարվող ջրի ցածր ճնշման հետ կապված խնդիրը լուծելու նպատակով քայքայված ջրագծի փոխարեն կառուցվել է նոր D=110մմ L=300մ պոլիէթիլենային ջրագիծ:

Օդանավակայան թաղամասի ջրամատակարարման սպխեմա.



✓ Ռ.Դանիելյան փողոցը սնող L=200մ թուջե ջրագիծը երկար տարիներ չվերանորոգվելու պատճառով վնասվել էր և ենթակա էր փոխարինման: Իրականացված աշխատանքների արդյունքում կառուցվել է նոր L=230մ պոլիէթիլենային ջրագիծ:

➤ **Քաղաք Կապան**

Կավարտ թաղամասի թվով 140 անհատական տնատիրությունների ջրամատակարարումն իրականացվում էր «Կավարտ» ՕԿՁ-ից դուրս եկող D=90մմ պոլիէթիլենային խողովակով: Ճնշման տատանումների հետևանքով խողովակը բազմաթիվ հատվածներում վթարվել էր: Առկա մեծ ջրակորուստների պատճառով հայտարարված ջրամատակարարման շուրջօրյա գրաֆիկը հաճախ խախտվում էր:

Խնդրի կարգավորման նպատակով գործող $D=90$ մմ $L=300$ մ խողովակը փոխարինվել է $D=110$ մմ պոլիէթիլենային խողովակով: Արդյունքում նշված տնատիրությունները ապահովված են կայուն և կանոնավոր ջրամատակարարմամբ:



➤ **Քաղաք Արտաշատ**



➤ Արտաշատ քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակում Արովյան գյուղից Լանջազատ գյուղն ընկած հատվածում $D=400$ մմ ջրագծի վրա առկա արտահոսքով վթարը հայտնաբերվել և վերացվել է, որի



արդյունքում տնտեսվել է 60 Լ/վ ջրաքանակ:

➤ Ազգային Ակադեմիայի ամառանոցների տարածքով անցնող Գառնու $D=500$ մմ ջրատարի վրա կատարված չափումները արձանագրում էին ջրի ճնշման կտրուկ տատանումներ:



Ջրատարի նշված հատվածում կատարվել էր բացվածք և ջրատարի միջից հանվել էր փայտե տախտակ, որը և առաջացնում էր ճնշման դիմադրություն: Արդյունքում կարգավորվել է ջրատարի բնականոն աշխատանքը:

➤ Արտաշատ, Վեդի, Արարատ քաղաքները և մի շարք գյուղական համայնքներ սնող $D=500$ մմ «Գառնի-Արտաշատ-Երասխավան» ջրատարը, որի մի հատվածն անցնում էր ոռոգման առվակի տակով, ժամանակի





ընթացքում քայքայվել էր և ենթարկվել կոռոզիայի: Իրավիճակի շտկման նպատակով Լանջազատ գյուղի սկզբնամասում իրականացվել են վթարականխարգելիչ աշխատանքներ, որոնց շրջանակներում կառուցվել է նոր $D=400$ մմ $L=7$ մ պողպատե ջրագիծ:

➤ Քաղաք Սևան


Իրականացված վթարաորոնողական աշխատանքների ընթացքում «Սևան-Երևան» ավտոմայրուղու մոտ՝ Սևանի Ճանապարհային ոստիկանության հենակետի ետնամասում, $D=400$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է 7 լ/վ ջրակորուստ:



➤ Քաղաք Չարենցավան

Խանջյան փողոցում ջրամատակարարման ցանցի բարելավման նպատակով իրականացվել են մի շարք աշխատանքներ, որոնց արդյունքում հնարավոր է դարձել շահագործումից հանել վթարային $D=100$ մմ $L=300$ մ և $D=150$ մմ $L=400$ մ ջրագծեր: Արդյունքում տնտեսվել է $Q=4.5$ լ/վ ջրաքանակ, իսկ ջրամատակարարման ցանցը դարձել է ավելի պարզ և կառավարելի:

Խանջյան փողոցի ջրամատակարարման սխեմա



➤ **Քաղաք Սիսիան**



Շիրակի և Իսրայել-Օրու փողոցներում $d=50$ մմ պոլիէթիլենային ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է 5 լ/վ ջրի արտահոսքով վթար:

Ջրագծի երկու հատվածներում կատարվել է $l=7$ գծ/մ ընդհանուր երկարության խողովակների փոխարինում համապատասխան կցամասերով:


Մոտ 4 ժամ տևած աշխատանքներից հետո ներկայումս ջրամատակարարումն իրականացվում է վերանորոգված ջրագծով:



➤ **Քաղաք Սպիտակ**

Կենտրոն թաղամասը սնող «Ջրաշեն» աղբյուրում կատարվել են կապտաժների խմբավորման և հավաքող խողովակների փոխարինման աշխատանքներ: Արդյունքում հավաքվել են կապտաժներից դեպի գետ հոսող ջրերը և ուղղվել ջրատարի մեջ՝ $Q=11$ լ/վ-ով ավելացնելով քաղաքին մատակարարվող ջրաքանակը: Այժմ կենտրոն թաղամասը նախկին 8-ժամյա ջրամատակարարման գրաֆիկի փոխարեն ապահովված է 12-ժամյա ջրամատակարարումով:

Ջրաշեն աղբյուրի սխեմա



➤ **Քաղաք Մարտունի**

Մոմչյան փողոցի 1-ին փակուղու անհատական տնատիրությունների ջրամատակարարումն իրականացվում էր վթարված, քայքայված խողովակներով: Ջրի ճնշումը չէր բավարարում կանոնավոր ջրամատակարարում ապահովելու համար:



Հարցի կարգավորման նպատակով կառուցվել է $D=20-50$ մ



$L=210$ մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակ, ինչպես նաև տեղադրվել են ջրաչափական և փականային հանգույցների դիտահորեր: Հայտնաբերվել և խցափակվել են ապօրինի միացումներ, կատարվել են անհատական միացումներ նոր կառուցված ջրագծից:

Արդյունքում ջրի ճնշումը կարգավորվել է, ջրամատակարարումը դարձել է հուսալի:


➤ **Քաղաք Ապարան**

✓ Թումանյան, Մաշտոց, Պ.Սևակ, Բաղրամյան և Ծաղկունյաց փողոցներում տարիներ



շարունակ չանջատված հին ջրագծերը ջրակորուստների և վթարային իրավիճակների պատճառ էին հանդիսանում: Խնդրի լուծման համար անջատվել և խցափակվել են թվով 6 $D=40-50$ մ վթարային ջրագծեր՝ տնտեսելով $Q=4.3$ լ/վ ջրաքանակ: Իրականացված աշխատանքների արդյունքում տնտեսվել է նաև ամսական 5.000կՎտ/ժ էլեկտրաէներգիա:

✓ Գ.Նժդեհ փողոցում իրականացվել են վթարային իրավիճակում գտնվող ջրագծի փոխարինման աշխատանքներ նոր $D=200$ մ $L=20$ մ ջրագծով: Արդյունքում տնտեսվել է $Q=7.5$ լ/վ ջրաքանակ:



➤ **Քաղաք Վայք**


D=500մմ ջրատարի վրա առկա մի շարք վթարների վերացման նպատակով



հայտարարված 24 ժամյա ջրազրկման ընթացքում Ջերմուկի խճուղու 2-րդ նրբանցքից մինչև «Կամուրջ» թաղամասն ընկած հատվածում իրականացվել են լայնածավալ վթարականխարգելիչ աշխատանքներ, ինչպես նաև հայտնաբերվել և խցափակվել են մի շարք ապօրինի միացումներ,

որի արդյունքում տնտեսվել է 12 լ/վ ջրաքանակ:

Կառուցվել է նաև նոր ջրթող խողովակ և տեղադրվել է D=150մմ փական: Արդյունքում էապես բարելավվել է Վայք քաղաքի ջրամատակարարումը, և ներկայումս տեղի բնակչությունը ապահովված է 24 ժամյա հուսալի ջրամատակարարմամբ:



➤ **Քաղաք Ճամբարակ**

Գարեգին Նժդեհ փողոցի թիվ 150 տան դիմաց առկա էր գաղտնի վթար: Ջուրը ստորգետնյա հոսքով լցվում էր հարևան թիվով 5 տնատիրությունների տարածքներ:




Իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է D=160մմ ջրատարի, անհատական տնատիրությունների տարածքով անցնող հատվածում, առկա վթարը: Արդյունքում տնտեսվել է 2-3լ/վ ջրաքանակ:

➤ **Քաղաք Վեդի**



Արարատյան-Երևանյան և Արամ Խաչատրյան-Շիրազ փողոցների խաչմերուկներում D=50մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել են համապատասխանաբար 5լ/վ և 6լ/վ ջրակորուստներ:



➤ **Գյուղ Լճաշեն**

Լճաշեն գյուղի խորքային հորերից մղվող և «Սևան» տեղամասի սպասարկման ամբողջ տարածքը սնող D=500մմ ջրատարը վթարվել էր, որի



հետևանքով խաթարվել էր նշված տարածքների ջրամատակարարումը: Կատարված հողային աշխատանքների արդյունքում պարզվել էր, որ ջրատարը ճեղքվել էր միացման հանգույցից: Մոտ 18 ժամ տևած վթարավերականգնողական



աշխատանքների արդյունքում վերականգնվել է «Սևան» տեղամասի սպասարկման տարածքի ջրամատակարարումը:

➤ **Գյուղ Լիճք**

Տարիներ շարունակ գյուղի բնակիչների բողոքում էին խոնավությունից, սակայն ջրի տեսանելի կուտակումներ կամ արտահոսք չէր հայտնաբերվում:



Ենթադրվող պատճառն էր Լիճք գյուղով անցնող «Ծակքար-Մարտունի» D=400մմ L=18կմ պողպատե ջրատարից սնվող բնակավայրի բաշխիչ ցանցի վրա

առկա վթարը:

Խնդրի լուծման նպատակով իրականացված լայնածավալ աշխատանքների արդյունքում ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 3 գաղտնի վթար: Վթարված հատվածները եռակցվել են պողպատե թիթեղներով, ինչի արդյունքում վերացվել է ջրի արտահոսքը:



➤ **Գյուղ Ակնալիճ**

Գյուղի անկանոն ջրամատակարարման և ջրի ցածր ճնշման խնդիրը կարգավորելու նպատակով իրականացվել են մի շարք աշխատանքներ: Ներհամայնքային բաշխիչ ցանցի D=100մմ L=400մ պողպատե քայքայված խողովակը փոխարինվել է D=90մմ պոլիէթիլենային խողովակով:



Հայտնաբերվել և խցափակվել են թվով 4 ապօրինի միացումներ, թվով 22 անհատական տնատիրությունների ջրաչափերը տեղափոխվել են սահմանազատման կետեր: Արդյունքում տնտեսվել է Ց/վ ջրաքանակ, կարգավորվել է ջրի ճնշումը, իսկ ջրամատակարարումը՝ կանոնավորվել:



Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից կատարված աշխատանքները աղյուսակային տեսքով:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1005
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	21010
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	20630
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	4950
Ջրաչափական հանգույցների ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	7
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4679.1
Կառուցված ջրագիծ	մ	2652.05
Շահագործումից հանված կոյուղագիծ	մ	38
Կառուցված կոյուղագիծ	մ	138.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	309
Փոխարինված փական	հատ	116
Փոխարինված հանգույց	հատ	5
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	117
Մաքրված դիտահոր	հատ	611
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	350.7
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	988
Ջրահեռացման ցանցում	հատ	1548
Պոմպակայաններում	հատ	83
Մաքրված անձրևընդունիչ	հատ	802

1.2. Ջրահեռացման համակարգ

➤ Քաղաք Երևան

Գյուրքյան փողոցով անցնող $D=900$ մմ բետոնե խողովակը որոշ հատվածներում կոտրված էր, առկա նստվածքը հաճախակի խցանումների պատճառ էր դառնում: Խնդրի կարգավորման համար վերոնշյալ խողովակի $L=12$ մ հատվածը փոխարինվել է $D=600$ մմ երկշերտ պոլիէթիլենային խողովակով, և ներկայումս կոյուղագիծը գտնվում է աշխատանքային վիճակում:



➤ Քաղաք Սիսիան



Տարիներ շարունակ Հ.Որոտնեցու փողոցի 15 հասցեում թվով 7 տնատիրությունների ջրահեռացման համակարգը միացված էր մի դիտահորում, այնուհետև $L=7$ մ երկարությամբ խողովակով կոյուղաջրերը ուղղվում էին դեպի մեծ տրամագիծ ($D=300$ մմ) ունեցող կուլեկտոր:

Նշված հատվածում կոյուղաջրերը գրեթե չէին հեռացվում, կուտակվում էին ու բնակիչներին մշտապես անհարմարություններ պատճառում:

Հողային աշխատանքների ընթացքում պարզ է դարձել, որ ծանրաբեռնված բեռնատարների երթևեկության պատճառով կոյուղագիծը կոտրվել էր, խողովակը լցվել էր նստվածքային բեկորներով, որոնք և արգելափակում էին կոյուղաջրերի հոսքը: Տեղաշարժվել էր նաև երկու խողովակների միացման հանգույցը:

Վնասված $L=6$ մ երկարությամբ խողովակը փոխարինվել է նոր $D=250$ մմ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակով: Արդյունքում թվով 7 տնատիրությունների ջրահեռացման համակարգը գործում է անխափան:



Հաշվետու ժամանակահատվածում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

N	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Դիտահորերի մաքրում	Անձրև ընդունիչների մաքրում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մետր	հատ	հատ	հատ	մ
1	Կենտրոն	1560	357	3	242	6
2	Հյուսիս	2840	217	6	1	24
3	Հարավ	410	278	9	-	-
4	Էրեբունի	1250	177	-	-	6
5	Արմավիր	9570	75	-	-	2
6	Արտաշատ	3050	58	-	-	-
7	Արարատ	6150	41	-	-	-
8	Մասիս	290	29	-	-	-
9	Գավառ	1620	21	-	-	-
10	Սևան	9300	84	-	-	-
11	Մարտունի	545	10	-	-	-
12	Վարդենիս	30	3	-	-	-
13	Ճամբարակ	0	2	-	-	-
14	Դիլիջան	1425	23	-	-	-
15	Վայք	300	7	-	-	-
16	Եղեգնաձոր	60	11	-	-	-
17	Ջերմուկ	0	28	-	-	-
18	Սիսիան	3450	42	-	-	6
19	Գորիս	0	20	6	-	-
20	Կապան	680	49	-	-	-
21	Մեղրի	0	16	-	-	-
22	Մաշտոց	1.77	300	-	28	13.5
23	Շահումյան	2.03	206	25	28	21
24	Արաբկիր	1.88	305	-	20	-
25	Ջեյթուն	0.12	242	-	476	-
26	Աբովյան	2.4	84	252	-	-
27	Հրազդան	3340	115	221	-	-
28	Չարենցավան	1.965	53	198	-	-
29	Աշտարակ	2.2	27	64	-	-
30	Էջմիածին	2.3	100	558	-	-
31	Աշոցք	-	10	14	-	-
32	Արթիկ	-	29	72	-	-
33	Նոյեմբերյան	0.15	16	6	-	-
34	Սպիտակ	-	18	42	-	-
35	Տաշիր	-	6	14	-	-
36	Ստեփանավան	0.5	-	24	-	-
37	Իջևան	-	89	102	-	-
38	Լոռի	7.8	215	103	-	51,4
39	Ապարան	-	18	54	-	-
40	Շիրակ	0.36	672	15	-	-
41	Թալին	-	4	-	-	-
42	Ալավերդի	1.2	50	110	-	-
43	Բերդ	-	6	5	-	-
	Ընդամենը	45.895	4.113	1.903	795	130

1.3. Կեղտաջրերի մաքրում և հեռացում

Հաշվետու ամսում կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են հետևյալ



վթարավերականգնողական աշխատանքները:

Գավառ, Մարտունի և Վարդենիս ԿՄԿ-ների ստուգայցի ժամանակ հայտնաբերվել է, որ հովացման անցքերի փոշուց խցանման պատճառով սարքավորումների



շարժիչները նորմայից ավել էին տաքանում: Խնդիրը վերացվել է շարժիչների հովացման սեկցիաները մաքրելու

արդյունքում:

«Գավառ» ԿՄԿ-ում խոշոր ճաղավանդակի ռեդուկտորի աշխատանքը խաթարվել էր՝ առաջացնելով բարձր աղմուկ և թրթռում: Ռեդուկտորը վերանորոգվել է և այժմ աշխատում է բնականոն ռեժիմով:

Ապամոնտաժվել և մաքրվել է «Գավառ» ԿՄԿ-ում մանր ճաղավանդակի ուղղահայաց կոնվեյերի վրա գտնվող խցանված մամլիչը :



Սևան քաղաքի N3 և N5 կոյուղու պոմպակայանների աղբահավաք զամբյուղները քայքայվել էին և չէին ծառայում իրենց նպատակին: Խնդիրը վերացնելու նպատակով պատրաստվել և տեղադրվել են նոր զամբյուղներ:

Պոմպերի հորերի կափարիչների պողպատե թիթեղները կոռոզիայի էին ենթարկվել և վտանգ էին ներկայացնում շահագործող անձնակազմի համար: Դրանք նույնպես փոխարինվել են:

«Վարդենիս» ԿՄԿ-ի ցանկապատի մոտ անցնող ջրատար առվակը խցանվել էր խիտ խոտածածկույթի և տիղմի նստվածքի հետևանքով, որի պատճառով մակերևույթային ջրերը հոսում էին կոյուղու ցանց, այնուհետև պոմպակայան՝ առաջացնելով էլեկտրաէներգիայի ծախսի ավելացում: «Վարդենիս» ԿՄԿ-ի և «Վարդենիս» տեղամասի աշխատակիցների համատեղ աշխատանքի շնորհիվ ջրատար առվակը (L=150մ) մաքրվել է, և այժմ մակերևույթային ջրերը հոսում են ջրատար առվակով:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը


N	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Սղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ (տոննա)
1	Ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	-	79 324	41.4
2	Ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	-	81 570	18
3	Ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	-	175 066	7.2
4	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	-	189 407	7.9
5	Ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	-	132 274	18.9
6	Ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19 166	-	-
7	Ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8496	-	-
8	Ք. Գավառ	«Գավառ» պ/կ	17 400	-	-
9	Ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	12 000	-	-
10	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	10 379	-	-

1.4. Էներգոհամակարգ

➤ Քաղաք Երևան



Ազատամարտիկների փողոց 72 հասցեի պոմպակայանի էլ. սնուցման մալուխի անսարքության պատճառով խափանվել էին պոմպի շարժիչները: Մալուխը և շարժիչները վերանորոգվել են կարճ




ժամանակահատվածում: Պոմպը աշխատում է նորմալ ռեժիմով:


➤ Քաղաք Էջմիածին

- ✓ Շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու նպատակով Չարենց թաղամասը սնուցող պոմպակայանում կատարվել են օպտիմալացման աշխատանքներ: Փոխարինվել է D=200մմ փականը, տեղադրվել են D=50մմ թվով 2 փականներ և խցափակվել է D=250մմ ջրագիծը: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է 36կՎտ/ժ հզորությամբ պոմպը և փոխարենը տեղադրվել 7կՎտ/ժ հզորությամբ պոմպ: Ջրամատակարարման տևողությունը դարձել է շուրջօրյա նախկին 3 ժամի փոխարեն:

Չարենց թաղամասը սնուցող պոմպակայանի սխեման աշխատանքներից առաջ



Չարենց թաղամասը սնուցող պոմպակայանի սխեման աշխատանքներից հետո



✓ Էջմիածին քաղաքի բազմաբնակարան շենքերի ջրամուղիչ պոմպերը սնող էլեկտրաէներգիայի ծախսը գրանցող ինդուկցիոն CA4111672M տիպի հաշվիչները 15 հասցեներում փոխարինվել են երկսակագնային CTEM և ABB էլեկտրոնային հաշվիչներով:

Հ/Հ	Հասցե
1	Մաշտոց 22-2 մուտք
2	Կիրով 38բ
3	Կիրով 12, 12ա
4	Կիրով 43ա
5	Բաղրամյան 24
6	Շահումյան 46, 48, 50
7	Կիրով 40
8	Կիրով 41բ
9	Կիրով 41ա
10	Բաղրամյան 22բ
11	Մաշտոց 14
12	Չարենց 1
13	Զվարթնոց 11, 12
14	Շահումյան 67, 71, 73
15	Մաշտոց 12

➤ **Քաղաք Մասիս**



«Գառնի» ջրատարից «Մասիսի» ՕԿՁ լցվող ջրատարի վրա տեղադրված հոսքաչափը ապահովվել է էլ. սնուցմամբ, որը հնարավորություն է տալիս ավտոմատ կերպով վերահսկել ՕԿՁ լցվող ջրաքանակը: Մինևույն ժամանակ բարելավվել է ամբարի արտաքին լուսավորությունը:



➤ **Քաղաք Չարենցավան**

Չարենցավան քաղաքի 4/10 հասցեում իրականացված գոտիավորման աշխատանքների արդյունքում ջրամատակարարման ցանցում հնարավոր է դարձել բարձրացնել ջրի ճնշումը՝ ապահովելով ինքնահոս ջրամատակարարում, ինչի արդյունքում շահագործումից հանվել է 2Կ6/1/4 տիպի 4կՎտ հզորությամբ պոմպակայանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված հասցեների գոյություն ունեցող պոմպերը փոխարինվել են ավելի փոքր հզորության պոմպերով:

Հ/Հ	Պոմպակայանի անվանում	Շենքերի քանակ	Նախկին պոմպի մակնիշ /քանակ / հզորություն	Փոխարինված պոմպի մակնիշ /քանակ / հզորություն	Նվազեցված հզորություն (կՎտ)
1	ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 3, 5	2	4K12/1/11	2K6/1/ 4	7
2	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհ 2ա, 4բ	2	4K12/1/11	2K6/1/ 4	7
3	ք. Եղվարդ, Եղվարդեցու 4	60 առանձնա սուն	2K6/1/ 4	H-803/1/ 1,5	2,5
4	ք. Գյումրի, Արվելաձե 12	2	3K9 /1/ 7.5	2K6 /1/ 4	3,5
5	ք. Գյումրի, Կոշտոյան 5/1, 5/2	2	4K12 /1/ 18.5	2K6 /1/ 4	14,5
6	ք. Գյումրի, Կ.Դեմիրճյան 7ա, Շիրակացի 8ա	2	3K9 /1/ 7.5	2K6 /1/ 4	3,5
7	ք. Գյումրի, Սաշա Գրիգորյան 10 ա	5	4K12 /1/ 15	2K6 /1/ 4	11
8	ք. Գյումրի, Կամո 50ա	1	3K9 /1/ 7.5	1,5KM6 /1/ 2,2	5,3
ԸՆԴԱՄԵՆԸ					54,3

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը

Հ/Հ	Պուպակայանների հասցեն	Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը
1.	Նարեկացու 39	Ստատորի, ավտոմատ անջատիչի 12Ա, եռաֆազ թողարկիչ 18Ա, ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների, առանցքակալների փոխարինում
2.	Նորքի 5-րդ գ-ծ, Մառի 12	Ճնշումային բաքի մեմբրանի 200-300լ, կափոխյրի 1/2՝ փոխարինում
3.	Ռոստովյան 27	Ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների, բաքի մեմբրանի 200-300լ փոխարինում
4.	Բագրատունյաց 4-րդ նրբ. 38/1	Ավտոմատիկայի կառավարչի, եռաֆազ թողարկիչի, տերմեռելի փոխարինում
5.	Արշակունյաց 42/3	Առանցքակալի, եռաֆազ թողարկիչի 18Ա, ջրի պոմպի CHV2-50 փոխարինում
6.	Նժդեհի 31/36	Լիսեռի, ավտոմատ անջատիչի 12Ա փոխարինում
7.	Բագրատունյաց 14	Պոմպի խցուկի, ավտոմատ անջատիչի 12Ա փոխարինում
8.	Արցախի 18	Պոմպի խցուկի, առանցքակալի փոխարինում
9.	Նարեկացու 54	Լիսեռի, առանցքակալի փոխարինում
10.	Քուչակի 48	Առանցքակալի փոխարինում
11.	Վարդանանց 5ա	Եռաֆազ թողարկիչի 18Ա, պոմպի խցուկի փոխարինում
12.	Մանթաշյան 4/3	Եռաֆազ թողարկիչի 18Ա, պոմպի խցուկի փոխարինում
13.	Նորագյուղ պ/կ	Եռաֆազ թողարկիչի 18Ա, ժամանակի ռելեի փոխարինում
14.	Չեխովի 16	Լիսեռի, ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների փոխարինում
15.	Չեխովի 1	Պոմպի խցուկի, ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների փոխարինում
16.	Նալբանդյան 25/14	Ավտոմատիկայի կառավարչի, բարձր ճնշման ռելեի 5-6բար, ավտոմատ անջատիչի 12Ա փոխարինում
17.	Դիմիտրով 89	Վնասված ավտոմատ անջատիչի 12Ա, , ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների փոխարինում
18.	Վ. Շենգավիթ 2փ., 1,2շ	Ավտոմատիկայի կառավարչի, ֆազի բացակայության ռելեի փոխարինում
19.	Սայաթ-Նովա 21	Ավտոմատիկայի կառավարչի, եռաֆազ թողարկիչի 18Ա, պոմպի խցուկի փոխարինում
20.	Արտաշիայան 86	Առանքակալի և լիսեռի փոխարինում
21.	Արշակունյաց 52/1	Հետադարձ փականի 1՝, անցման և կափոխյրի փոխարինում
22.	Գաջեգործների 74շ	Եռաֆազ թողարկիչի 18Ա փոխարինում
23.	Շիրակի 2/7	Եռաֆազ թողարկիչի 18Ա, պոմպի խցուկի փոխարինում
24.	Գ. Նժդեհի 45	Պոմպի շարժիչի, դետալների, առանցքակալի, պոմպի խցուկի, լիսեռի, եռաֆազ թողարկիչի 18Ա փոխարինում
25.	Նորքի 5-րդ գ-ծ 21	Բարձր ճնշման ռելեի 5-16ԲԱՐ, հետադարձ փականի 2՝ փոխարինում
26.	Նոր Արեշ 15/1	Վնասված առանքակալի փոխարինում
27.	Աթոյան անց. 8	Եռաֆազ թողարկիչի 18Ա, ավտոմատ անջատիչի 12Ա փոխարինում
28.	Ռոստովյան 34, 36	Եռաֆազ թողարկիչի 18Ա, ավտոմատ անջատիչի 12Ա փոխարինում
29.	Շարուրի 26, 28	Եռաֆազ թողարկիչի 18Ա փոխարինում
30.	Նարեկացու 43	Ջրի պոմպի CHV4-50 փոխարինում
31.	Մարյան 4	Ցածր ճնշման ռելեի փոխարինում 0-8բար
32.	Թումանյան 5/1	Ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների փոխարինում
33.	Նիզամի 24,26,28	Ցածր ճնշման ռելեի փոխարինում 0-8 բար
34.	Օրբելի 18	Փոխվել է 2 ստատոր
35.	Համբարձումյան 10	Փոխվել է բարձր 2 ճնշման ռելե
36.	Ադոցի 9	Փոխվել է ճնշման բաքի միացման դետալներ, 1 եռաֆազ թողարկիչ, 1 լիսեռ, 2 առանցքակալ, 2 բանվորական անիվ
37.	Բաղրամյան 1 անց. 14շ	1հ եռաֆազ թողարկիչ, 1հ ցածր ճնշման ռելե
38.	Ա.Խաչատրյան 1շ	1հ խճուկ
39.	ք.Էջմիածին Չարենցի 1	Պոմպի մոնտաժ, ապամոնտաժ
40.	ք.Եղվարդ, Սումգայիթ թաղ.ամաս	Ժամային ռելեի կարգավորում
41.	Լենինգրադյան 31	Փոխվել է 1 ավտոմատիկայի կառավարիչ, 1 խցուկ
42.	Լենինգրադյան 31/6 - 25	Փոխվել է 1 ավտոմատ անջատիչ, 2 եռաֆազ թողարկիչ
43.	Լենինգրադյան 36	Հոսքաչափի մալուխի վերանորոգում
44.	գ.Գեղանիստ	Հոսքաչափի մալուխի վերանորոգում
45.	Առաքելյանի 66 - 34	Փոխվել է 2 առանցքակալ, 1 վերանորոգման հավաքածու, 1 ստատոր, 1 ֆազի բացակայության ռելե, 1 եռաֆազ թողարկիչ

46.	Ռայնիսի 105 - 14	Փոխվել է 1 եռաֆազ թողարկիչ
47.	Ահարոնյանի 2/2 - 46	Փոխվել է 2 առանցքակալ, 2 ստատոր, 1 եռաֆազ թողարկիչ, 1 ավտոմատիկայի կառավարիչ, 1 տրանսֆորմատոր, 1 ավտոմատ անջատիչ, ռետինե խողովակի դետալներ
48.	Հ.Էմինի 82 - 23	1h թողարկիչ, 1h բարձր ճնշման ռելե, 1խցուկ
49.	Հ.Էմինի 5 - 53	Էլ. սարքերի կարգավորում
50.	Սունդուկյանի 17 - 66	2h առանցքակալ, 2h հետադարձ փական, 1h ավտոմատ անջատիչ
51.	գ.Նուռնուս	Էլ սարքերի կարգավորում
52.	ք.Արովյան Գեղարդի 5	Էլ. համակարգի վերանորոգում
53.	Սոսեի 2 ՆՐԲ. 8 - 40	1h ավտոմատիկայի կառավարիչ
54.	Հակոբյան 12	1h խցուկ
55.	Ռայնիսի 105 - 14	1h հետադարձ փական, 2h կափույր
56.	ք. Էջմիածին, Շահումյան 69	Պոմպի աշխատանքի կարգավորում
57.	մ.Կոտայք, գ.Ջրաբեր	Պոմպի և էլ.սարքերի աշխատանքի կարգավորում
58.	Սեբաստիա 25 - 26	1հատ ավտոմատ անջատիչ
59.	Շինարարների 15/1 - 90	1h ավտոմատիկայի կառավարիչ, 1h խցուկ, 1h լիսեռ, 1h եռաֆազ թողարկիչ
60.	Ա. Խաչատրյան 27	1h ավտոմատ անջատիչ
61.	Սեբաստիա 24,26	2h առանցքակալ, 1h եռաֆազ թողարկիչ, կատարվել է պոմպի շարժիչի և վնասված դետալների վերանորոգում
62.	Սեբաստիա 25	փոխվել է ճնշման բաքի միացման դետալները
63.	Ջամբուլի 11	փոխվել է ճնշման բաքի միացման դետալները
64.	Կոմիտասի 56(Ն.Տիգրանյան 7շ)	1h մոնումետր
65.	Հ.Էմինի 5 - 53	Էլ. համակարգի վերանորոգում
66.	Ռայնիսի 105	Փոխվել է 1 մոնումետր
67.	ք.Գյումրի, Շիրակացի 54 տուն	2.2կՎտ շարժիչի փոխարինում 4կՎտ
68.	ք.Գյումրի, Խրիմյան 3 շենք	11կՎտ շարժիչի փոխարինում 4կՎտ
69.	ք.Էջմիածին, Շահումյան 69	Փոխվել է 1 ճկուն խողովակ, 5 անցում, վնասված դետալների վերականգնում:
70.	ք.Գյումրի, Խրիմյան 6 շենք	4 կՎտ շարժիչի վերանորոգում
71.	ԿիևՅԱՆ 4/3	1h լիսեռ, 1h առանցքակալ
72.	Կոմիտաս 20	1h ժամ, ռելե, 1h եռաֆազ թողարկիչ
73.	Կոմիտասի 36/7 - 26	1h եռաֆազ թողարկիչ, 1h ավտոմատ անջատիչ
74.	Կոմիտասի 36/7 - 26	Փոխվել է 200մլ ճնշումային բաքի մեմբրան, 1անցում
75.	Ա.Խաչատրյանի 27 - 31	Էլ. համակարգի վերանորոգում
76.	ք.Չարենցավան 6փող. 18 շենք	Փոխվել է 1 կցորդիչ
77.	Վ.Փափագյանի 11 - 39	100մմ 2h փական
78.	Ա.Խաչատրյան 27/1 - 35	2h եռաֆազ թողարկիչ
79.	ք.Էջմիածին	Էլ հաշվիչների փոխում
80.	ք.Գյումրի, Կ.Դեմիրճյան 7ա	7.5 կՎտ պոմպի փոխարինում 4.0կՎտ պոմպով:Կատարվել է զողման աշխատանքներ
81.	ք.Գյումրի, Կոշտոյան 5/1	18.5 կՎտ պոմպի փոխարինում 4.0կՎտ պոմպով:Կատարվել է զողման աշխատանքներ
82.	ք.Գյումրի, Մաշա Գրիգորյան փող.10ա շենք	11 կՎտ պոմպի փոխարինում 4.0կՎտ պոմպով:Կատարվել է զողման աշխատանքներ
83.	ք.Գյումրի, Գարեգին Առաջինի(Արվելաձեի)փող. 12 շենք	7.5 կՎտ պոմպի փոխարինում 4.0կՎտ պոմպով:Կատարվել է զողման աշխատանքներ
84.	Կոմիտասի 4 - 9	Էլ. սարքերի կարգավորում
85.	Ռ. Մելիքյանի 2/3 - 28	Պոմպի աշխատանքի կարգավորում
86.	Հ.Էմինի 7 - 54	Փոխվել է 2 եռաֆազ թողարկիչ
87.	ք.Գյումրի, Ղանդիլյան 3 շենք	Ավելորդ խողովակների անջատում զողմումով
88.	ք.Գյումրի Երևանյան խճ.105	Պոմպակայանում կատարվել են զողման աշխատանքներ
89.	ք.Գյումրի Երևանյան խճ.139	Պոմպակայանում կատարվել են զողման աշխատանքներ
90.	ք.Գյումրի Երևանյան խճ.155	Պոմպակայանում կատարվել են զողման աշխատանքներ
91.	Արաբկիր 19 Փ. 6 - 95	Փոխվել է 1 բարձր ճնշման ռելե

92.	Լենինգրադյան 52 - 127	Փոխվել է 1 խցուկ
93.	Կոմիտաս 45/1Շ	Փոխվել է 2 հետադարձ փական, 1 ֆազի բացակայության ռելե, 2 մոնոմետր, 1 ավտոմատ անջատիչ
94.	Օրբելի 67	Փոխվել է 1 եռաֆազ թողարկիչ
95.	ք.Էջմիածին պոմպակայանների	Էլ. հաշվիչների փոխում
96.	ք.Էջմիածին, Շահումյան 46	Պոմպի գնում, 1h եռաֆազ թողարկիչ
97.	Օրբելի 63/1 Շ ԲՆ 40	Էլ. սարքերի կարգավորում
98.	Մարշալ Բաղրամյան 1 ՓԱԿ. 14	1h եռաֆազ թողարկիչ
99.	Ա3թաղ. 16շ	Փոխվել է 1հատ բարձր ճնշման ռելե
100.	Լենինգրադյան 52 - 132	Վնասված դետալների վերականգնում
101.	Մարշալ Բաղրամյան 1 ՓԱԿ. 1 - 21	1h եռաֆազ թողարկիչ
102.	Մարշալ Բաղրամյանի 70 - 52	Փոխվել է 1 թերմոռելե, 1 ավտոմատ անջատիչ
103.	Արաբկիր 19 Փ. 6 - 97	Փոխվել է 1 բարձր ճնշման ռելե, 2 առանցքակալ, 1 վերանորոգման հավաքածու, 1 լիսեռ, 1 ստատոր
104.	Ա.Խաչատրյանի 6 - 95	1h եռաֆազ թողարկիչ, 1h ստատոր, 2h առանցքակալ, 1h վերանորոգման հավաքածու
105.	ք. Չարենցավան 4փ 7շ	1h կցորդիչի գոտու փոխում
106.	Զիվանի 11/1 - 47	1h ցածր ճնշման ռելեյի փոխարինում
107.	Գյուլբենկյանի 44	Փոխվել է 2 ստատոր
108.	ք.Գյումրի Կամոյի 48	Էլ. շարժիչի վերանորոգում
109.	Արաբկիր 17 Փ. 25 - 43	Փոխվել է 1 բարձր ճնշման ռելե, 1 ավտոմատիկայի կառավարիչ
110.	ք.Էջմիածին Շահումյան 69	Փոխվել է 1 ավտոմատիկայի կառավարիչ, 1 եռաֆազ թողարկիչ, 1 հետադարձ փական, 2 անցում, պոմպի միացման դետալներ
111.	Լենինգրադյան 52 - 79	Պոմպի աշխատանքի կարգավորում
112.	Սունդուկյան 15ա	Փոխվել է 1 լիսեռ, 1 խցուկ
113.	Վ.Համբարձումյանի 10 - 61	Էլ սարքերի գնում, կարգավորում
114.	Վ.Համբարձումյանի 10 - 20	2h եռաֆազ թողարկիչ
115.	Ազատության 3/1 - 54	1h ավտոմատիկայի կառավարիչ
116.	Ադոնցի 7/1 - 12	1h ստատոր, 2h առանցքակալ
117.	Վ.Համբարձումյանի 47 - 36	Փոխվել է 1 ֆազի բացակայության ռելե, 3h ռելե

1.5. Մեքենա-մեխանիզմներ

Հաշվետու ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման :

JCB 3CX 1534LS էքսկավատորի հետևի կամրջակը կապիտալ վերանորոգվել է, փոխարինվել են ատամնանիվներ, առանցքակալներ, խցուկներ և ներդիրներ: Նորոգվել են նաև բարձր ճնշման թվով 3 մոլիչները՝ փոխարինվել է բարձր ճնշման բաժանարարը, ինչպես նաև խցուկներ, մխոցներ, վերացվել է յուղի արտահոսքը:

Իրականացվել են թվով 4 մեքենաների շարժիչների կապիտալ վերանորոգում, փոխարինվել են մխոցները, մխոցաօղերը, ներդրակները, խտաբուկերը և կատարվել են հղկման



աշխատանքներ: Շարժիչի գլխիկը ենթարկվել է հղկման, փոխարինվել են կափույրները և խցուկները:

Թվով 4 մեքենաների շարժիչները մասնակի նորոգվել են, փոխարինվել են շարժիչի հանդարտիչները, հղկվել և կարգավորվել են գլխիկները, փոխարինվել են կայծամուբերը և ներդիրները:



Թվով 5 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորով:

Թվով 3 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 4 մեքենայի արգելակման համակարգը նորոգվել է. փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները,

սկավառակները և ձեռքի ճոպանները:

Թվով 5 մեքենաների փոխանցման տուփերը նորոգվել են, փոխարինվել են ատամնանիվները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 1 մեքենայի հոսանքները կարգավորվել և վերանորոգվել են, փոխարինվել են կայծամուբերը, կայծամոմի լարերը, էլ. ռելեները, վառոցքի բանալիներն ու մալուխները:

Վերանորոգվել են թվով 5 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման խողովակները: Իրականացվել է թվով 9 մեքենաների գազաբալոնային համակարգի սպասարկում:

Կատարվել է թվով 2 մեքենաների թափքի նորոգում, ապակիների, ծածկոցի տեղադրում:

Կցորդման համակարգի նորոգումներ են իրականացվել թվով 11 մեքենաների վրա: Փոխարինվել են կցորդման սկավառակները, շաղկապման մեխանիզմները, անջատող առանցքակալները և խտաբուկերը:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 10 մեքենաների վրա: Փոխարինվել են գնդավորները, դեկի



ձգաձողերը, ուղղորդիչ վռանները, մեղմիչները, անվակունդի առանցքակալները, հարվածամեղմիչի զսպակները և հարվածամեղմիչները:

Հետևի կամրջակի նորոգումներ կատարվել է թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկները, ատամնանիվները, առանցքակալները, կիսատնիները, խտաբուկները, մանեկները, սատելիտները:



Բարձր ճնշման հիդրոհամակարգի նորոգումներ են կատարվել թվով 5 մեքենաների և էքսկավատորների վրա: Փոխարինվել և նորոգվել են հիդրոյուղերը, խտաբուկները, բարձր ճնշման մղիչները:

Փոխարինվել են թվով 12 անվադողեր և կատարվել է դրանց հավասարակշռում:

Իրականացվել է թվով 1 մեքենայի գեներատորի

նորոգում:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ջրամատակարարման և ջրահեռացման առկա վթարների ժամանակին վերացմանը :

2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Բաժանորդների տվյալներ


Շարունակվում է բաժանորդների հետ նոր պայմանագրերի կնքման գործընթացը: Երևանի տարածաշրջանից «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 54.780, իսկ Մարզերում 41.000 նոր պայմանագիր:


«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.06.2017թ. դրությամբ հաշվառված բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գոյություն ունեցող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	332.888	260.326	78.2
2		Իրավաբանական անձ	16.974	12.401	73.1
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	383.753	250.207	65.2
2		Իրավաբանական անձ	16.019	7.422	46.3

2.2. Հասույթ

Ընկերության հասույթի մակարդակի բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի գործողություններ, մասնավորապես. ջրաչափական սարքերի ցուցմունքների ճշգրիտ և ժամանակին մուտքագրում, ինչը հանդիսանում է իրատեսական հասույթի ձևավորման նախապայման: Ստորև գրաֆիկային տեսքով բերված է 2017թ. ջրաչափով բաժանորդների ամսական սպառման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ.





Շարունակվում են զրոյական ծախսերի և կասկածելի ջրածախսերի վերաբերյալ վերլուծությունները: Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է 2017թ. մայիս ամսին Ընկերության Առևտրային տնօրինությունների հասույթի առաջադրանքների կատարողականության տվյալները.

Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք	Փաստացի	Տարբերություն
		հազ.մ3	հազ.մ3	%, հազ.մ3
Երևան	Մայիս	6048	6014	-0.56
		3908	3920	0.31

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ծախսի տվյալները.

Տարեթիվ	Երևան	Մարզեր
	Մայիս	
2016թ.	13.6	9.0
2017թ.	14.7	11.8
Տարբերությունը	1.1	2.8

2.3. Գանձում

Հաշվետու ամսին Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.024.561	1.006.737	971.133	964.825	3.967.256
	Հավաքագրում	692.209	1.143.800	887.210	978.278	3.701.497
	%	67.56	113.61	91.36	101.39	93.30
Մարզեր	Առաջադրանք	582.951	608.945	594.916	560.140	2.346.952
	Հավաքագրում	101.954	592.521	468.175	547.640	1.710.290
	%	17.49	97.30	78.70	97.77	72.87

2.4. Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ Տվյալների բազայում 01.06.2017թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Երևան	Ջրաչափով	327.419	258.630	78.99	16.311	12.379	75.89
	Առանց ջրաչափի	5.469	1.696	30.01	663	22	3.32
Մարզեր	Ջրաչափով	333.886	239.982	71.88	14.425	7.409	51.36
	Առանց ջրաչափի	49.867	10.225	20.50	1.594	13	0.82

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում փոխարինվել է շուրջ 3450 հատ, իսկ Մարզերում 2705 ջրաչափական սարք: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Տվյալների բազայում 01.06.2017թ. դրությամբ հաշվառված պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Երևան	443.231	282.884	63.82	18,969	2.911	15.35
Մարզեր	391.894	384.400	98.09	16,560	16.002	96.63

2.5. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

Շարունակական աշխատանք է տարվել ապօրինի միացումների հայտնաբերման և ֆիքսման ուղղությամբ: Հաշվետու ամսվա ընթացքում օրինականացվել և բաժանորդների տվյալների բազայում հաշվառվել են Երևանի տարածաշրջանում թվով 380, իսկ Մարզերի տարածաշրջանում 79 նոր բաժանորդային քարտեր:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար	Վճարում
Երևան	47	29.518	4.732.971	6.684.949
Մարզեր	50	31.913	5.282.414	885.000


3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1.Ջրամատակարարման շարունակականություն

Մայիս ամսին Երևան քաղաքի ջրամատակարարման շարունակականության տվյալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ չեն փոփոխվել:

Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:

Ջրամատակարարման շարունակականությունը (Երևան)



3.2.Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում պոմպակայաններում առաջացած թվով 21 էլ.մատակարարման խափանումները օպերատիվ կերպով կարգավորվել են:

Լոգերների էլ. հաշվիչների տվյալների վերլուծության արդյունքում հայտնաբերվել և վերացվել են թվով 11 թերություններ: Որոշ հասցեներում էլ.համակարգի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է 8845 կՎտ հավելագրում, ինչի մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատուներին՝ ուղղում կատարելու նպատակով:


Կատարված աշխատանքները ստորև ներկայացված են աղյուսակային տեսքով.

h/h	Հասցե	Կատարված աշխատանք	Ամսեկան Կվտ/ժ
1	Օրբելի 8	Հաշվիչի փոխարինում	
2	Ազատության 3/1	Թողարկիչի փոխարինում	288
3	Մասիսի 99/3	Ճնշումների կարգավորում	323
4	Արցախի 24/1	Հավելագրում	8845
5	Արցախի 10	Հավելագրում	
6	Գայդար 97	Հավելագրում	
7	Ա. Խաչատրյան 6	Հավելագրում	
8	Կոնդ 5թ.	Հավելագրում	
9	Մաշտոց 18	Հավելագրում	
10	Թումանյան 31	Հավելագրում	
11	Վրացական 6	Հավելագրում	

Շոգ եղանակային պայմանների պատճառով, հաշվետու ամսում գործածվել են պահեստային ռեժիմում գտնվող պոմպերը, ինչի արդյունքում ջրառը ավելացել է 350լ/վ-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Պոմպակայաններում նակինում կանխատեսվող էլ.էներգիայի ծախսը նույնպես ավելացել է ամսական 254.703Կվտ/ժ (32.3%) :


Երևան քաղաքի էլ.էներգիայի կանխատեսվող ծախսը ավելացել է 249680 Կվտ/ժ (19.42%) էլ.էներգիա անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի պոմպակայանների սպառած էլ.էներգիան



«Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության էլ. էներգիայի կանխատեսվող ծախսը ավելացել է 347954Կվտ/ժ-ով (7.62%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից սպառած էլ.էներգիան



3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ

Հաշվետու ժամանակահատվածում ԱՏՀ խմբի աշխատակիցների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտե տրամադրելու նպատակով «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության լոգերների սպասարկման գոտիների կազմում և տպագրում:
- ԱՏ համակարգից բաժանորդների առանձնացում և արտածում՝ առևտրային տնօրինությանը տրամադրելու նպատակով :
- Առևտրային տնօրինությունների մասնագետ-տեսուչների հետ համատեղ, իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշգրտում, հավաքագրված ինֆորմացիայի ներմուծում ԱՏ համակարգ, ինչպես նաև փոխանցում բաժանորդների տվյալների բազա՝ տեղեկատվությունը թարմացնելու նպատակով:
- Շահագործման տարածաշրջանների տնօրինություններին քարտեզների տրամադրում՝ նշելով տվյալ բնակավայրի համար լոգերների տեղադրման վայրը, պոմպակայանների տարածքները և քանակները : Լոգերների ուսումնասիրված տվյալների, դրանց տեղադրման վայրերի, պոմպակայանների վերաբերյալ


ինֆորմացիայի ներմուծում USZ համապատասխան թեմատիկ շերտում և տվյալների բազայում:

- USZ տվյալների բազայից «Շերամ» և «Քանաքեռ ՀԷԿ» ՋՄԳ (ջրամատակարարման գոտիների) քարտեզների և համապատասխան իրավաբանական ու ֆիզիկական բաժանորդների ծածկագրերի տրամադրում՝ ջրաչափերի փոխարինման պիլոտային ծրագրի համար:
- «Նարեկացի» թաղամասի համար փորձնական հիդրավլիկ մոդելի կազմում:
- «Արևելք» տարածաշրջանի տնօրինության համար թվով 192 վերակառուցվող կոյուղագծերի և 12 ջրագծերի սխեմաների կազմում և սպագրում:
- «Արևմուտք» տարածաշրջանի տնօրինության համար թվով 4 վերակառուցվող ջրագծերի և թվով 18 կոյուղագծերի աշխատանքային սխեմաների կազմում և սպագրում:
- «AutoCad» ծրագրով «Եզնակ» ՕԿՁ-ի ջրամատակարարման սխեմայի կազմում:
- Ապարան քաղաքի ջրագծերի սխեմատիկ քարտեզի կազմում:
- «Լոռի ջրմուղկոյուղի», «Շիրակ ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲ նախկին ընկերությունների օպերատորների կողմից տրամադրված թվային քարտեզների («AutoCAD» ֆորմատից) տրանսֆորմացիայի գործընթացի մեկնարկ՝ USZ համապատասխան քարտեզագրական շերտերում և տվյալների բազայում:
- Շահագործման Տարածաշրջանների տնօրինությունների ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- 1-85 հեռախոսակենտրոնի կողմից գրանցած ջրագծերի և կոյուղագծերի վթարների մասին ինֆորմացիա պարունակող հասցեների տեղադրում USZ քարտեզի վրա՝ տվյալների տեղաբաշխման և հաճախականության վերլուծության նպատակով:


3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

Կարգավարման խմբի կողմից առաջարկվել է «Locator» ծրագրում ստեղծել «Instructions» հավելվածը, որի միջոցով ավելի արդյունավետ կլինի վերահսկել ՀՀ տարածքում «Վեոլիա Ջուր» Ընկերության կողմից շահագործվող ջրամատակարարման բաշխիչ ցանցի, օրվա կարգավորիչ ջրամբարների և պոմպակայանների բնականոն


աշխատանքը՝ Շեղումների դեպքում հավելվածը կարգավարին նախազգուշացնում է անհրաժեշտ գործողություններ կատարելու մասին՝



Երևան քաղաքի Շերամի փողոցի D=700մմ ջրագծի վրա հայտնաբերվել և «Շահումյան» տեղամասի աշխատակիցների կողմից վերացվել է Q=50լ/վ վթար:




Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի D=500մմ ջրագծի D=300մմ խափանված ճնշման կարգավորիչը կարգավորվել է «Շահումյան» տեղամասի աշխատակիցների կողմից:




Կարգավորվել է «Հրագդան միկրո» ՕԿՁ-ի աշխատանքը: Ներկայումս «Մաքրավան 2» պոմպակայանի՝ «Կենտրոն 2» և «Կենտրոն 3» պոմպերը շահագործվում են օրական մեկ անգամ, նախկին 2 անգամվա փոխարեն: Արդյունքում պոմպերը կշահագործվեն ավելի երկար ժամանակ, իսկ խաղովակաշարերում չեն առաջանա հիդրավիլի հարվածներ:

Աշխատանքներից առաջ




Աշխատանքներից հետո




Իրականացված որոշ աշխատանքների արդյունքում կանոնակարգվել է «Նոր Ակունք – Արմավիր» ՕԿՁ-ի մակարդակը: Ներկայումս ՕԿՁ-ն աշխատում է համաչափ, ջրամբարի դատարկման անհրաժեշտություն չի առաջանում:

Աշխատանքներից առաջ




Աշխատանքներից հետո




Իրականացված աշխատանքների և վերլուծությունների արդյունքում Մասիս քաղաքը սպասարկող «Արարատյան 1-2» պոմպակայանի աշխատաժամանակը կրճատվել է 30%-ով: «Մասիս-Խարբերդ» ՕԿՁ-ում այլևս գերլցում տեղի չի ունենում:

Աշխատանքներից առաջ




Աշխատանքներից հետո




Անսարք փականի պատճառով «Գառնի» ջրատարից դեպի «Մասիս-Խարբերդ» ՕԿՁ մղվող ջրաքանակը (մոտ 70լ/վ) նվազել էր մինչև 10լ/վ: Անսարքությունը կարգավորվել է «Մասիս» տեղամասի աշխատակիցների կողմից 2

«Գավառ կաբելի» ՕԿՁ-ն նախկինում ռացիոնալ չէր օգտագործվում, պոմպը շահագործվում էր օրական ավելի քան 5 անգամ: Ներկայումս այն շահագործվում է ամբողջ աշխատանքային ծավալով օրական 3 անգամ: Արդյունքում պոմպը աշխատում է քիչ ընդհատումներով, ինչը բերում է պոմպի երկարատև շահագործմանը:

Աշխատանքներից առաջ




Աշխատանքներից հետո




«Թալին Ներքին Արթիկ» ՕԿՁ-ի մակարդակի նվազեցման հետ կապված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խցանվել է ջրամաբար լցվող ջրատարի ֆիլտրը: Մաքրման աշխատանքների արդյունքում ջրամաբարի մակարդակը կանոնավորվել է:

Աշխատանքներից առաջ




Աշխատանքներից հետո




Ալավերդի քաղաքի Թեղուտ գյուղի պոմպակայանի պոմպի անկանոն աշխատանքը պայմանավորված էր «Թեղուտ կոնտակտային» ՕԿՁ-ի լողանի անսարքությունով, որի վերանորոգումից հետո պոմպի աշխատանքը կանոնավորվել է: Վերականգնվել է նաև «Թեղուտ կոնտակտային» ջրամբարի մակարդակը :

Աշխատանքներից առաջ




Աշխատանքներից հետո




«Թեղուտ» պոմպակայանի խափանված հետադարձ փականը կարգավորվել է «Ալավերդի» տեղամասի աշխատակիցների կողմից:

Աշխատանքներից առաջ




Աշխատանքներից հետո




Կարգավորվել է Ապարան քաղաքի «Եզնակ» պոմպակայանի աշխատանքը: Պոմպակայանից դուրս եկող երկու ուղղությունների աշխատանքային ռեժիմները փոփոխվել են՝ բարձր սակագնով հաշվարկվող աշխատաժամը փոխարինվել է ցածր (գիշերային) սակագնային աշխատաժամով: Արդյունքում ՕԿՁ-ն լցվում և դատարկվում է համաչափ:

Աշխատանքներից առաջ



Աշխատանքներից հետո




Մեծ ուշադրություն է դարձվել Նոյեմբերյան և Բերդավան քաղաքները սպասարկող պոմպակայանների աշխատանքային գրաֆիկներին: Վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ նպատակահարմար է չորս խորքային պոմպերը (N1` 22Կվտ, N2` 32Կվտ, N3` 22 Կվտ, N4` 11 Կվտ) կարճ ժամանակով աշխատացնելու փոխարեն, աշխատացնել միայն N3 խորքային պոմպը, ինչն էլ բերել է էլեկտրաէներգիայի տնտեսմանը (N1` 22Կվտ, N2` 32Կվտ, N3` 22 Կվտ, N4` 11 Կվտ):

Աշխատանքներից առաջ



Աշխատանքներից հետո




4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ և ՄԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Համակարգչային ցանց

Մայիս ամսվա ընթացքում կատարվել են համակարգչային ցանցի ընթացիկ սպասարկման աշխատանքներ: Ավարտին է հասցվել Վայքի ռեգիոնալ կետնրոնի ներքին համակարգչային ցանցի կապակցումը:

Ընթացքի մեջ են համակարգիչների վերաթարմացման աշխատանքները, որի արդյունքում բոլոր համարգիչները կթարմացվեն մինչև Microsoft Windows 10 թողարկումով, ինչը թույլ կտա բարձրացնել համակարգիչների կառավարման համակարգը: Կենտրոնական Գրասենյակի և Շահագործման Տարածաշրջանների



Տնօրինությունների համակարգիչներում տեղադրվում են արտոնագրված MS Office 2010/2013 համակարգեր: Համակարգիչներում տեղադրվում են նաև առանձին փոխակերպիչներ, որոնք վարկյանների ընթացքում թույլ են տալիս ընթացիկ հին «ANSI» համակարգով փաստաթղթերը փոխակերպել «Unicode» համակարգի:

4.2. Ինտերակտիվ համակարգ

Ընթացիկ ամսում լուրջ խնդիրներ են առաջացել «Interactive» համակարգի սերվերի հասանելիության հետ: Կատարվում են բոլոր հնարավոր աշխատանքները՝ նշված համակարգը նոր սերվերային միջավայր տեղափոխելու ուղղությամբ: Արդյունքում լիովին կբացառվի ինֆորմացիայի կորուստը, իսկ հասանելիությունը կվերակազմվի հաշված թույլների ընթացքում:

4.3. Բջջային օպերտարներ և ինտերնետ

Մայիս ամսվա ընթացքում ավարտվել են Կենտրոնական գրասենյակի ներքին հեռախոսահամարների կապակցման աշխատանքները՝ «V-Office Ucom» համակարգի կիրառմամբ, առցանց տարբերակով, լիովին կառավարվում են բոլոր ներքին հեռախոսահամարները: Կենտրոնական գրասենյակում քաղաքային հեռախոսահամարների զգալի կրճատման արդյունքում ծախսերը կնվազեն ամսական մոտ 200.000 դրամով: Նշված համակարգին են միացվում նաև Մարզերի Հաճախորդների սպասարկման կենտրոնի հեռախոսահամարները, որը աշխատակիցներին

հնարավորություն կտա կարճ եռանիշ համարներով զանգահարելու բոլոր ներքին հեռախոսահամարներին:



Մարզային տեղամասերում նույնպես ավարտին են հասցվում «Rostelecom» ընկերության կողմից տեղադրվող նոր հեռախոսային ցանցի աշխատանքերը: Արդյունքում Ընկերությունը լիովին կանցնի ֆիքսված կապի նոր համակարգի, որը գրեթե կրկնակի կկրճատի ներկա ծախսերը:

4.4. Լոկատոր և SCADA համակարգեր

Մայիս ամսվա ընթացքում «Լոկատոր» ընկերության կողմից կատարվել են ընթացիկ սպասարկման աշխատանքներ: Խնդրահարույց կետերում կատարվում են կապի օպերատորների փոփոխություններ, որպեսզի բացառվեն կապակցված սարքավորումների անջատումները:

Ընկերության կողմից լիովին թարմացվել է «Locator-Scada» բջջային հավելվածը: Ներկայումս Մարզերի Շահագործման ՏՏ աշխատակիցերը օգտվում են հավելվածի թարմացված տարբերակով, աշխատանքներ են տարվում համակարգը կիրառելի դարձնել նաև Երևանի շահագործման տեղամասերում:

Բջջային հավելվածով հնարավորություն է ընձեռնվել առցանց կառավարել «Scada» համակարգին միացված բոլոր սարքավորումները:



4.5. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում «DOXX» և «UNICOMP» ընկերությունների կողմից մատակարարվել են նոր համակարգչային սարքավորումներ, մասնավորապես բարակ միացումներ և ցանցային կառավարման բաշխիչներ: Արդեն սկսվել են հին համակարգիչների և ցանցային սարքավորումների թարմացման աշխատանքները: Ուսումնասիրություններ են կատարվում համակարգում ներդնելու «ամպային» «OneDive» համակարգը, որը թույլ կտա մինչև 5GB մեծությամբ MS Word և MS Excel ֆայլերի օգտագործումը: